Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՄՈՒՑՄԱՆԻՍ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԳԱՆՁԱՐԱՆ

Հայ. ԽՍՀ Խաղաղության կոմիսարների խորհրդի և Էկոնոմիկայի խորհրդի գանձարանի գանձապետ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՅՍ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

[Հաստատված է Համայն Վրաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Սով. Ժողովրդական Կոմիսարների խորհրդի 1931 թ. սեպտեմբերի 17-ի վորոշմամբ (Վրաստանի Սով. Ժ. Ժ. 1931 թ. № 20, հոդ. հոդ. 206, 208), փոփոխություններով մինչև 1933 թ. հունիսի 15-ը]

I. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ժողովրդական կոմիսարիատներն և նրանց հավասարեցրած կենտրոնական հիմնարկությունները, ռայոնական գործադիր կոմիտեները և քաղաքային խորհուրդները իրավունք ունեն հրատարակել պարտադիր վորոշումներ. այս վորոշումները համապատասխան տերրիտորիայի սահմաններում բնակչության համար, նաև հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների համար սահմանում են վորոշ պարտավորություններ, վորոնց խախտումը մեղապարտների համար առաջ է բերում պատասխանատվություն վարչական կամ դատական կարգով։

2. Պարտադիր վորոշումներ հրատարակելու համար լիազորված մարմինների բաժինները, կառավարչությունները և այլ մասերը, նաև որենքում չհիշած հիմնարկություններն իրավունք չունեն հրատարակելու պարտադիր վորոշումներ, իսկ անհրաժեշտության դեպքերում պետք է դիմեն համապատասխան մարմիններին՝ միջնորդելով հրատարակել պարտադիր վորոշումներ։

3. Պարտադիր վորոշումներ հրատարակելու համար լիազորված մարմինները (հոդ. 1) չեն կարող պարտադիր վորոշումներ հրատարակելու իրենց իրավունքը փոխանցել ստորադաս մարմիններին կամ պարտադիր վորոշումների հրատարակությունը հանձնել յենթակա հիմնարկություններին։

4. Պարտադիր վորոշումները չպետք է հակասեն որենքներին, իսկ իշխանության ստորադաս և տեղական մարմինների պարտադիր վորոշումները—նաև իշխանության վերադաս և կենտրոնական մարմինների վորոշումներին, հրահանգներին և այլ ակտերին կամ չպետք է կրկնեն հիշյալ ակտերի բովանդակությունը։

4¹. Իշխանության ստորադաս և տեղական մարմինները չեն կարող պարտադիր վորոշումներ հրատարակել, յեթե նույն հարցերի մասին վորոշումներ են հրատարակել իշխանության վերադաս կենտրոնական մարմինները և այ

վորոշումներում նախատեսել են խախտողների համար քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվություն, բացի այն դեպքերից, յերբ հենց սույն ակտերում կան ուղղակի ցուցմունքներ ստորադաս և տեղական մարմինների կողմից պարտադիր վորոշումներ հրատարակելու մասին։

[1933 թ. ապրիլի 18-ին (Ռ. Ժ. 1933 թ. № 12, հոդ. 148)]:

Ծանոթություն։—Այն դեպքում, յերբ իշխանության վերադաս կամ կենտրոնական մարմինը հրատարակում է ակտ այնպիսի հարցի վերաբերյալ, վորը կարգավորվում է իշխանության ստորադաս կամ տեղական մարմնի պարտադիր վորոշումով, այս պարտադիր վորոշումը հաժապատասխան մասում կորցնում է իր ույժը և այս վորոշումը հրատարակող մարմինը պարտավոր է փոփոխել կամ վերացնել իր պարտադիր վորոշումը։

[1933 թ. ապրիլի 28-ին (ՎՍԽՀ Ռ. Ժ. 1933 թ. № 12, հոդ. 148)]:

5. Ժողովրդական կոմիսարիատներն և նրանց հավասարեցրած կենտրոնական հիմնարկություններն իրավունք ունեն հրատարակել պարտադիր վորոշումներ միայն այն հարցերի վերաբերյալ, վոր հատկապես նշած են որենքում։

6. Ռայոնական գործադիր կոմիտեներն և քաղաքային խորհուրդներն իրավունք ունեն հրատարակել պարտադիր վորոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

I. *Ընդհանուր կառավարչության բնագավառում*

ա) հեղափոխական կարգի և հասարակական ապահովության պահպանության մասին։

բ) պետական, հասարակական և մասնավոր գույքի պահպանության մասին։

գ) տնային բանվորների և գիշերապահների ծառայություն մտցնելու մասին։

դ) տարերային աղետների դեմ (հեղեղումներ, հրդեհներ և այլն) պայքարելու մասին։

II. *Սոցիալ-կուլտուրական միջոցառումների բնագավառում*

ա) ընդհանուր սկզբնական պարտադիր ուսուցում մուծելու մասին։

բ) անգրագիտությունը վերացնելու մասին։

գ) բնակչության առողջության պահպանության մասին (սանիտարական կանոնների պահման, բնակավայրերն առողջացնելու համար միջոցառումներ անցկացնելու մասին, հասարակական սննդի, բնակչության գոյության սանիտարա-կենցաղային պայմանների, հիվանդությունների դեմ պայքարի մասին։

III. *Տեղական բարեկարգության բնագավառում*

ա) քաղաքային բնակավայրերում սալահատակները, մայթերը, ջրմուղու ցանցը և կեղտաջրի խողովակները բարեկարգության մեջ պահելու մասին։

բ) տների ճակատներին համարային նշաններ կպցնելու, սանդուղքները լուսավորելու մասին։

գ) շենքերի և նրանց մասերի նորոգման և վերականգնման մասին և այնպիսի շենքերն և նրանց մասերը քանդելու մասին, վորոնք սպառնում են փլչել։

դ) տանիքների ձյունը մաքրելու մասին։

յե) անտառները, պարկերը, սկվերները, մարգերն և առհասարակ ծառատունկերը փչանալուց, կործանելուց և արածավերից պահպանելու մասին։ անտառներից, պարկերից, սկվերներից և այլ ծառատունկերից ոգտվելու կարգի մասին։

IV. *Բնակարանային տնտեսության բնագավառում*

ա) մասնավոր տներում բնակելի տարածությունները կոմունալ ֆոնդի ոգտին գրավելու մասին, որենքով վորոշած սահմաններում։

բ) անցնող զորքերին բնակարանների մեջ տեղավորման մասին։

գ) բնակչությունը տարերային աղետների դեպքում բնակարանների մեջ տեղավորելու մասին։

V. *Գյուղական տնտեսության բնագավառում*

ա) պարտադիր ագրոնոմիական կանոնների մասին։

բ) պաճարախտների և գյուղական տնտեսության վնասարարների դեմ պայքարի մասին։

VI. *Ձեռնարկությունների, արդյունաբերության և առևտրի գործունեության կարգավորման բնագավառում*

ա) հասարակական ոգտագործման ձեռնարկությունների (տրամվայների, ավտոբուսների, ճաշարանների, պանդոկների, թեյարանների, հյուրանոցների, գիշերային ապաստարանների, բաղանիքների, լողարանների, վարսավիրանոցների և այլն) բացման և գործունեության մասին։

բ) թատրոններ, կինոներ, ակումբներ, խաղատներ և այլ հասարակա-

11 .7 MAY 2013

կան տեղեր բաց անելու-փակելու կարգի և ժամանակի և նրանց մեջ կարգ պահպանելու մասին.

գ) առանձին կոմունալ ձեռնարկությունների արտադրանքի սպառումը կարգավորելու մասին.

դ) հիմնարկությունների և ձեռնարկությունների համար տաքացնելու ժամանակաշրջան սահմանելու մասին.

յե) ուտիլհումքը պատշաճ կազմակերպությունների կողմից հավաքելու, պահելու և հանձնելու կարգի մասին.

զ) առևտուր անելու, մասնավորապես առևտրի համար տեղ, ժամանակ և կարգ սահմանելու մասին, նաև շուկաներում և տոնավաճառներում և առևտրի համար սահմանած այլ տեղերում կարգ մտցնելու մասին.

ե) անասնի և մսի առևտրի վրա հատուկ վետերինար-սանիտարական հսկողություն սահմանելու մասին, միսը դրոշմելու մասին (այն վայրերում, որ որոշում է հողագործության ժողովրդական կոմիսարիատը, համաձայնության գալով մատակարարման և առողջապահության ժողովրդական կոմիսարիատների հետ)։

VII. Տրանսպորտի բնագավառում

ա) ճանապարհային շինարարության մասին—որենքով որոշած սահմաններում և տեղական նշանակություն ունեցող ճանապարհների և ճանապարհային կառուցվածքների պահպանության մասին.

բ) տեղական տրանսպորտի կողմից մատուցվող ծառայությունների համար սակ սահմանելու մասին։

Այն հարցերի մասին, որ չեն հիշված սույն հոդվածի մեջ, ռայոնական գործադիր կոմիտեներն և քաղաքային խորհուրդները կարող են հրատարակել պարտադիր որոշումներ միայն այն դեպքերում, յերբ այդ հարցերի վերաբերյալ պարտադիր որոշումներ հրատարակելը վերապահված է նրանց հատուկ որենքներով, կամ Համավրացական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Վրաստանի ՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հատուկ որոշումներով։

[1932 թ. մայիսի 5-ի (Վ.ՍԽՀ. Ն. Ժ. 1932 թ. № 13, հոդ. 89). 1932 թ. մայիսի 13-ին (Վ.ՍԽՀ Ն. Ժ. 1832 թ. № 13, հոդ. 90). 1932 թ. նոյեմբերի 22-ին (Վ.ՍԽՀ Ն. Ժ. 1933 թ. № 1, հոդ. 1). 1932 թ. ապրիլի 28-ին (Վ.ՍԽՀ Ն. Ժ. 1933 № 12, հոդ. 148)]։

7. Պարտադիր որոշումները, բացի սույն հոդվածի 2-րդ մասում նշած բացառություններից, հրատարակվում է մի տարուց վոչ ավելի ժամանակով, հաշվելով նրա կիրարկության դնելու որից։ Ներգործության ժամկետը անցնելուց հետո պարտադիր որոշումը կորցնում է իր ուժը։

Ժողովրդական կոմիսարիատների և նրանց հավասարեցրած կենտրոնական հիմնարկությունների պարտադիր որոշումները, իսկ ռայոնական գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների պարտադիր որոշումներից այնպիսիները, որոնք վերաբերվում են 1) հեղափոխական կարգի և հասարակական ապահովության պահպանությանը (հոդ. 6., հատվ. I, կետ «զ»), 2) բնակչության առողջապահության (հոդ. 6, հատվ. II, կ. «գ») և 3) բարեկարգության (հոդ. 9, հատվ. II) կարող են հրատարակվել և մի տարից ավելի ժամանակով և կարող են գործել մինչև նրանց վերացնելը և այդ մասին պետք է հիշատակվի պարտադիր որոշման մեջ։

Այն պարտադիր որոշումները, որոնք հրատարակված են չնշելով նրանց ներգործության ժամկետը, կամ առանց հիշատակելու, որ որոշումը գործում է մինչև նրա վերացնելը, համարվում են հրատարակած մի տարի ժամանակով։

[1933 թ. ապրիլի 28-ին (Ն. Ժ. 1932 թ. № 12, հոդ. 148)]։

8. Պարտադիր որոշման մեջ պետք է նշած լինի՝

ա) նրա անվանումը «պարտադիր որոշում».

բ) նրա հրատարակող իշխանության մարմինը.

գ) հրատարակության ժամանակը—տարին, ամիսն և որաթիվը.

դ) այն տերրիտորիան, որի վրա տարածվում է նրա ներգործությունը, ընդ սմին նա կարող է տարածվել հրատարակող մարմնին յենթակա ամբողջ տերրիտորիայի վրա, կամ այդ տերրիտորիայի մի որոշ մասի վրա, որը ճշտությամբ ցույց է տրվում պարտադիր որոշման մեջ.

յե) այն անձանց, հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների շրջանը, որոնց վրա տարածվում է որոշումը, ըստ որում որոշումը կարող է տարածվել տվյալ տերրիտորիայի ամբողջ բնակչության և նրա վրա գտնվող հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների վրա, թե նրանց որոշ խմբերի վրա.

զ) որոշումով սահմանած պարտավորությունները.

ե) պատասխանատվությունը նրանց խախտման համար—առաջ և բերում այդ խախտումը պատասխանատվություն վարչական կարգով թե քրեական կարգով (հոդ. 13), նշելով պատժի չափը և տեսակը, որ կարելի յե դնել խախտողի վրա և որենքը, յեթե պատիժը սահմանված է վերջինի կողմից։

ը) քանի ժամանակով է նա հրատարակված (հոդ. 7) և ինչ ժամանակից է նա ուժի մեջ մտնում (հոդ. 9).

թ) այն մարմինները, որոնց վրա դրվում է պարտադիր որոշման կատարման հսկողությունը։

Պարտադիր որոշումը պետք է ստորագրի նրա հրատարակող մարմնի ղեկավարը, իսկ ռայոնական գործադիր կոմիտեների և քաղաքային խոր-

ՀԱՍ ԱՌՆ Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

հուրդների վորոշումները նաև այս կոմիտեների և խորհուրդների քարտուղարները։

[1933 թ. ապրիլի 28-ին (Ռ. Ժ. 1933 թ. № 12, հոդ. 148)]։

9. Պարտադիր վորոշումը պետք է հրապարակվի ի հանուր գիտության, տպագրելով մամուլի պաշտոնական թերթում (վորտեղ նա հրատարակվում է), կամ փակցնելով տեսանելի տեղերում, (հիշատակելով փակցման ժամանակը), ինչպես որինակ, ռայոնական գործադիր կոմիտեների, քաղաքային և գյուղական խորհուրդների շենքերի վրա, փողոցներում, հրապարակներում և հասարակական այլ տեղերում, և որենքի ուժ է ստանում տասն որ անցնելուց հետո, հաշվելով նրա հրապարակման որից, յեթե պարտադիր վորոշման մեջ չի նշած ավելի ուշ ժամկետ։

Անհետաձգելի դեպքերում, ինչպես որինակ՝ տարերային դժբաղդությունների, համաճարակների դեմ պայքարի դեպքում, անցնող զորքերի բնակարաններում տեղավորելու դեպքում և այլն թույլ է տրվում պակասացնել վերև մատնանշած ժամկետը, նաև պարտադիր վորոշումը կիրարկության դնել նրա հրապարակման որից, սակայն պարտադիր վորոշումը չի կարող կիրարկության դրվել նախ քան նրա հրապարակումը։

Գյուղական խորհուրդները ընտրողների ժողովներում պետք է կարդան այն պարտադիր վորոշումները, վորոնց ներգործությունը տարածվում է տվյալ գյուղական խորհրդի տերիտորիայի վրա։

[1933 թ. ապրիլի 28-ին (Ռ. Ժ. 1933 թ. № 12, հոդ. 148)]։

10. Ստորագրելուց հետո պարտադիր վորոշումների պատճենները յերեք որվա ընթացքում պետք է ուղարկել ի տեղեկություն՝

ա) ժողովրդական կոմիսարիատների և նրանց հավասարեցրած կենտրոնական հիմնարկությունների վորոշումները—Համայն Վրաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Կազմակերպչական բաժնին և հանրապետության դատախազին.

բ) ռայոնական գործադիր կոմիտեների և ինչպես ինքնուրույն վարչատնտեսական միավորներ դասված քաղաքների քաղաքային խորհուրդների պարտադիր վորոշումները—Համայն Վրաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Կազմակերպչական բաժնին և ռայոնական դատախազին.

գ) ռայոնի մեջ մտնող քաղաքների քաղաքային խորհուրդների պարտադիր վորոշումները—համապատասխան ռայոնական գործադիր կոմիտեյի նախագահությանը և ռայոնական դատախազին։

11. Պարտադիր վորոշումները կիրառելու համար հրահանգները հրատարակում են իշխանության նույն մարմինները, վորոնք հրատարակում են պարտադիր վորոշումները։

12. Առանձին կանոններով են կարգավորվում պարտադիր վորոշումների հրատարակությունը՝

ա) այն վայրերում, վորտեղ մտցրած են հեղափոխական կարգի պաշտպանության արտակարգ միջոցներ բացառիկ կամ պատերազմական դրության ձևով (ՎՍԽՀ Ռ. Ժ. 1929 թ. № 22, հոդ. 250).

բ) գյուղական խորհուրդների կողմից հրատարակվող պարտադիր վորոշումները.

գ) զատված կուրորտների տերիտորիայի վրա։

[1933 թ. ապրիլի 28-ին (ՎՍԽՀ Ռ. Ժ. 1933 թ. № 12, հոդ. 148)]։

II. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

13. Պարտադիր վորոշումները խախտելու համար պատասխանատվությունը սահմանվում է՝ ա) որենքով (դատական կամ վարչական) կամ բ) պարտադիր վորոշումով (վարչական), որենքով նախատեսած սահմաններում։

Ծանոթություն։—Հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների պաշտոնյաները պարտադիր վորոշումները խախտելու համար կրում են պատասխանատվություն մասնավոր անձանց հավասար.

14. Յեթե որենքում չկան հատուկ ցուցմունքներ, պարտադիր վորոշումներով նրանց խախտման համար սահմանվում են հետևյալ վարչական պատիժները՝

ա) տուգանք.

բ) հարկադիր աշխատանքներ։

15. Պարտադիր վորոշումներով վարչական պատիժները (հոդ. 14) նշանակվում են հետևյալ սահմաններում՝

1) ժողովրդական կոմիսարիատների և նրանց հավասարեցրած կենտրոնական հիմնարկությունների պարտադիր վորոշումներով՝ տուգանք մինչև հարյուր ռուբ. կամ հարկադիր աշխատանքներ մինչև մի ամիս ժամանակով.

2) ռայոնական գործադիր կոմիտեների և իբրև ինքնուրույն վարչատնտեսական միավորներ դասված քաղաքների պարտադիր վորոշումներով՝

ա) քաղաքներում և քաղաքային տիպի ավաններում կատարած խախտումների համար—տուգանք մինչև հարյուր ռուբլի կամ հարկադիր աշխատանքներ մինչև մի ամիս ժամանակով.

բ) գյուղական վայրերում կատարած խախտումների համար—տուգանք մինչև հիսուն ռուբլի կամ հարկադիր աշխատանքներ մինչև տասն և հինգ որ ժամանակով.

3) ռայոնների կազմի մեջ մտնող քաղաքների քաղաքային խորհուրդների պարտադիր վորոշումներով՝

տուգանք մինչև հիսուն ռուբլի կամ հարկադիր աշխատանքներ մինչև տասն և հինգ օր ժամանակով։

16. Տուգանքի կամ հարկադիր աշխատանքների կիրառման աննպատակահարմարության դեպքում, ի նկատի առնելով խախտման աննշան լինելը, խախտողի վոչ բավականաչափ տեղյակ լինելը և այլն, վարչական պատիժներ նշանակելու համար լիազորված մարմինները կարող են սահմանափակվել՝ հայտնելով խախտողին նախազգուշացում։

17. Պարտադիր վորոշումների խախտման համար վարչական պատիժները նշանակվում և ի կատար են ածվում այն ընդհանուր կանոնների համաձայն, վոր սահմանված են վարչական պատիժներ նշանակելու և ի կատար ածելու համար (տես վարչական պատիժների մասին կանոնադրությունը ստորև բերված հոդվածներում նշած բացառություններով)։

18. Ռայոնական գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների (այն դեպքում, յերբ վերջիններիս յենթակա յեն և գյուղական վայրերը) պարտադիր վորոշումներով, այս վորոշումների խախտման համար գյուղական վայրերում պատիժներ նշանակելը կարելի յե վերապահել գյուղական խորհուրդներին։ Գյուղական խորհուրդները այս դեպքում պատիժ են նշանակում այն կարգով, վոր սահմանված է գյուղական խորհուրդների կողմից պարտադիր վորոշումներ հրատարակելու և նրանց խախտման համար պատասխանատվության մասին կանոնադրությունով։ Պատիժն այս դեպքում չի կարող տասն ռուբլի տուգանքից կամ մինչև հինգ օր հարկադիր աշխատանքից ավելի լինել, յեթե պարտադիր վորոշումով չի սահմանված ավելի փոքր պատիժ։

19. Այն քաղաքներում, ուր գոյություն ունեն քաղաքի միլիցիայի բաժանմունքներ, պարտադիր վորոշումների խախտման համար վարչական պատիժներ նշանակելը կարելի յե նույն վորոշումներով վերապահել միլիցիայի այս բաժանմունքների պետերին, վորոնք այս դեպքում խախտողներին կարող են նշանակել պատիժներ նախազգուշացման և տուգանքի ձևով՝ Թիֆլիսում—տասն ռուբլուց վոչ ավելի, չվճարելու դեպքում փոխարինելով այս պատիժը հարկադիր աշխատանքներով մինչև հինգ օր ժամանակով, իսկ այլ քաղաքներում—մինչև հինգ ռ., փոխարինելով չվճարելու դեպքում, հարկադիր աշխատանքներով մինչև յերեք օր ժամանակով, յեթե պարտադիր վորոշումով չի սահմանված ավելի պակաս պատիժ։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 237)]։

20. Յեթե 18 և 19 հոդվածներում նշած դեպքերում գյուղական խորհուրդը կամ քաղաքի միլիցիայի բաժանմունքի պետը անհրաժեշտ են համարում նշանակել ավելի մեծ պատիժ, քան այդ վերապահված և իրենց, նրանք չնշանակելով պատիժ, գործը ներկայացնում են ռայոնական գործադիր կոմիտեին, քաղաքային կամ քաղաքային ռայոնական խորհրդին կից

վարչական պատիժներ նշանակող համապատասխան հանձնաժողովին (վարչական պատիժների կանոնադրության 4-րդ հոդ. ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 236)։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 237)]։

21. Թիֆլիսի քաղաքային խորհուրդն իրավունք ունի Թիֆլիս քաղաքի համար հրատարակվող պարտադիր վորոշումներում, վոր տնորինում են կարգը հասարակական տեղերում և կարգավորում յերթևեկը փողոցներում, ճիշտ նշելով խախտման տեսակն և նշանակելով խախտման համար մի վորոշ տուգանք, սակայն յերեք ռ. վոչ ավելի, սահմանել այս պարտադիր խախտումների համար (տրամվայների, ավտոմոբիլների, կառքերի, ձիյերի, հեծանիվների յերթևեկի կանոնների խախտումներ, ծխել, պապիրոսի մնացորդների շպրտելը, աղտոտումն և այլն) տուգանքի գանձումներ հենց խախտման տեղերում։

22. 21-րդ հոդվածում նախատեսած դեպքերում՝

ա) տուգանքի գանձումը կատարում են միլիցիայի աշխատակիցներն կամ այն պաշտոնյաները, վորոնք ամիջապես հսկում են սույն պարտադիր վորոշումների կատարման վրա. այս անձինք պետք է ճշտությամբ նշված լինեն պարտադիր վորոշման մեջ.

բ) գանձումը կատարվում է առանց արձանագրություն և վորոշում կազմելու, միայն տուգանք գանձելու համար տրվում է ընկալագիր.

գ) պարտադիր վորոշման խախտման տեղում տուգանք չվճարելու դեպքում, տուգանքի յենթարկված անձը պետք է ստորագրություն տա ընկալագրի գրքույկում այն մասին, վոր իրեն հայտարարված է տուգանելու մասին և պետք է ցույց տա իր հասցեն, պարտավորվելով յերեք որվա ընթացքում ներկայացնել տուգանքը ռայոնական միլիցիայի կառավարչությանը.

դ) այն դեպքում, յերբ տուգանքի յենթարկված անձը հրաժարվում է տուգանք վճարելուց կամ ցույց չի տալիս իր հասցեն, նաև այն դեպքում, յերբ կասկած է ծագում, վոր նա ճիշտ չի ցույց տվել իր ով լինելը կամ իր հասցեն, ընդհանուր կարգով կազմվում է արձանագրություն պարտադիր վորոշումը խախտելու մասին։

յե) «գ» կետում նշած դեպքում քաղաքի միլիցիայի բաժանմունքի պետի վորոշումով տուգանքը կարելի յե մեծացնել վոչ ավելի քան յերեք անգամ, յեթե այդ մեծացնելու հնարավորությունը նախատեսված է պարտադիր վորոշումով։

23. Սույն վորոշման 19-րդ հոդ. և 22-րդ հոդ. «բ» և «յե» կետերում մատնանշած դեպքերում պատիժ նշանակելու վորոշման դեմ գանգատները

39.258

տրվում են վարչական պատիժներ նշանակող համապատասխան հանձնաժողովներին, որոնց որոշումներն այս դեպքում վերջնական են։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ, № 24, հոդ. 237)]:

24. Վերացված է։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 237)]:

25. Վարչական պատիժներ նշանակելու ընդհանուր կարգից հատուկ որենքով սահմանվում են բացառություններ այն պարտադիր որոշումները խախտելու համար, որ կուրորտների լեռնային-սանիտարական պահպանության շրջանի համար հրատարակում է առողջապահության ժողովրդական կոմիսարիատը և գլխավոր կուրորտային կառավարչությունը—զատված կուրորտների տերրիտորիայի վրա։ (ՎՍԽՀ Ո. Ժ. 1927 թ. № 9, հոդ. 129. 1929 թ. № 14, հոդ. 146. 1931 թ. № 20, հոդ. 210. 1932 թ. № 24, հոդ. 239).

[1933 թ. ապրիլի 28-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1933 թ. № 12, հոդ. 148)]:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍ ԵՐԵՎԱՆ
ZHUO-Арм ССР
Ա. ՄԱՍՍԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0213424

Ս. Հ. Մ. Մ. Պոլիգրաֆտրեստի 1-ին ստամբա

Պատվեր № 828. Տիրաժ № 578.

350.2
4-21